Աշխարհը փոփոխական է, իսկ այսօրվա Երևանը հրաշք է: Կառուցում են բարձրահարկեր, փոխվում է մեր տեսակը: Ինչ-որ արվում է (առանց սխալի չի արվում ոչինչ)՝ սխալն էլ հետը լավ է: Ես շատ գոհ եմ:

- **Ձեր կյանքում դժվարին ժամանակներ շատ են եղել և կյանքի տարբեր ժամանակահատվածներում միշտ էլ հաղթահարելու բան եք ունեցել:**

- Կյանքը դիկտատոր է: Ավելի վատ վիճակում մարդիկ չեն ուզում ապրել, բայց չեն կարող կյանքից հեռանալ: Շատ քչերն են կամովին հրաժեշտ տալիս: Այսօր ինձ ապրեցնում է Հայաստանի շարժումը, թեպետ այն գարնանալի ձևով միշտ ինձ հետ է եղել, իմ մեջ: Թիֆլիսում ծնված՝ հենց նեղն էի ընկնում, ասում էի՝ Հայաստանում կհանգստանամ: Սի վանք կմտնեմ՝ կհանգըստանամ: Վայրիվերո կյանք են ունեցել, հատկապես՝ Հայաստանից դուրս:

- **Դուք բազմաժանր ստեղծագործող եք՝ գրականություն, նկարչություն, թատրոն, կինո, երաժշտություն, ո՞րն է ավելի զբաղիչ եղել ձեզ համար:**

- Կյանքը, կյանք, որի մեջ խրվում ես, ուզում ես ճիշտ լինի, չի ստացվում: Նկարչությունը, կինոն, թատրոնը պարտադրված են ինձ, ես ուրիշ ձև չունեմ. մատներս սա են, ես չեմ կարող հաստացնել, փոխել չեմ կարող ինձ: Ես ծնվել եմ 5 տարեկանից արվեստի մեջ եմ եղել, մտել եմ արվեստի խոռոչները:

Ինձ դիպլոմները չէին հետաքրքրում: Ութ տեղ են սովորել: Ես ավելի լավ էի նկարում, քան 4-րդ կուրսի ուսանողը, և ինստիտուտները աչքիցս ընկնում էին: Դա մի տեղ էր, որ պիտի 4 տարի հետույք մաշեիմ մի թուղթ ստանալու համար կամ ուղղակի միջակ նկարիչ դառնայիմ: Դա երբեքս խնդիր է: Ես կուզեմայի ուրիշ բան լինելի, բայց ինձ ոչ ոք չէր հարցնում: Ավելի տղամարդկային բաներ՝ օդաչու, բռնցքամարտիկ...

- **Ձեր բազմաթիվ ստեղծագործություններից ո՞րն է այսօր ձեզ համար ամենասիրելին:**

- Գիտեք, հաճախ մարդիկ են ինձ հիշեցնում այս կամ այն պատմվածքը, որի մասին մոռացած եմ լինում: Հիմա եթե ինձ հարցնեն՝ ավելի մասնագիտական գնահատականով կասե՞մ «Աղի կոմսը» և Թիֆլիսյան պատմվածքները:

- **Ինչո՞վ եք բացատրում, որ «Եռանկյունին» է ժողովրդի մեջ ճանաչվածը ձեր գործերից: Հայության որակները այստեղ ավելի ցայտո՞ւն են:**

- Իմ բոլոր գործերում հայությունն է: Իսկ «Եռանկյունին» մեծ

տարածում ստացավ, որովհետև կինո նկարվեց, մրցանակի արժանացավ: «Պեպոյից» հետո սա առաջին ազգային ֆիլմն էր: Առաջինը ռուսները գնահատեցին, մեր ռեժիսորները դեմ էին: Մրցանակը տվեց Տամարա Մակարովան, Լենինգրադում էլ՝ Մարկ Դոնսկոյը:

- **Ձեր «Եղած-չեղածը մի կյանք» ինքնակենսագրականը շարունակություն կունենա՞:**

- Գրքում ես վերջակետ եմ դրել: Նկարագրել եմ իմ մահը: Վերջին գլուխը իմ մահն է՝ Սաբա Աղասի. ծյունի փաթիլները իջնում են, իջնում ու ես հավերժություն եմ գնում: Ես ամեն ինչ պատկերացրել եմ: Բայց հիմա մի տեսակ դառն է գնալս: Երբ գրում էի, քաղցր էր, որովհետև հիվանդ չէի, առողջ էի: Երբ սիրում ես թո կյանքը, մահն էլ կյանքը սիրելու արտահայտություն է:

- **Եթե ձեզ տրվեր վերստին ապրել կյանքը, ի՞նչ չէիք անի, որ արել եք, կամ ի՞նչ կանեիք, որ չեք արել:**

- Ես կաշխատեի պահպանել ինձ: Ամենակարևորը թո «ես»-ը պահպանեի: Առաջին 40 տարվա մեջ ես ինձ քանդում էի խենթաբար: Ֆիզիկապես, հոգեպես մաքուր էությունս քանդում էի:

- **Գուցե այդպիսով ցանկացել եք կյանքի բոլոր կողմերը ճանաչե՞լ...**

- Ոչ, ես սխալ էի ապրում: Ես քանդում էի, պիտի կառուցեի, ոչ թե քանդեի, իսկ քանդում էի ոչ գիտակցաբար, ճակատագրի խնդիր կար: Ինչ-որ մեկը քանդում էր ինձ: Որ ասեմ սատանա, կինս կնեղանա, բայց որ չարիք գոյություն ունի և քեզ ուտում ու քանդում է, դա հաստատ է:

- **Բայց կայնպես, լինելով բարի նախահիմքով, դուք լավատեսությամբ եք վարակում շատերին:**

- Եղ բարին աղբի տակ է լինում: Օրեր կան, ամիսներ, բարին դուրս է գալիս ու բարձրանում, հաճախ դրա բարձրությունը շատ դժվար է որոշել, ոնց որ տիեզերք լինի: Այդ պահերը ես ունեցել եմ. ունեմ պատմվածքներ, որոնք գուցե քիչ նկատելի են, բայց այդ բարձրության վրա եմ:

- **Ուրախ եք, որ ապրել-ապրում եք 21-րդ դարի Հայաստանում: Ձեր շատ ժամանակակիցներ այս Հայաստանը, այս Երևանը իրենցը չեն համարում:**

- Ժամանակի հետ կարող եմ անհաշտ լինել, բայց Հայաստանի հետ՝ ոչ: Դեր Ձորում կարող է դժգոհ լինեիմ, որ հայ են ծնվել, բայց Ազնվուրը հայ է ծնվել եւ դժգոհ չէ, Սարոյանը հայ է ծնվել և հպարտ է:

- **Սարգիկ կան, որոնց կյանքում առաջնորդողը սերն է, իսկ մարդիկ էլ կան, որ ստելությունն է առաջ մղում: Ինչո՞վ եք դա բացատրում:**

- Սարգիկացի մեջ էլ, ինչպես կենդանիների մոտ, տարբերություններ կան: Ես դեմ եմ դաստիարակությանը: Բարին կարելի է դաստիարակել, բայց մարդիկ կան, որ միմուսով են ծնվում, և իրենց սնունդը չարությունն է: Դու իրեն սիրում ես, ինքը ամեն ինչ անում է, որ չարություն ստեղծի, որ կարողանա ուտել: Չարությունը իր սնունդն է: Կենսաբանությունն է: Կոմունիստները ուզում էին մարդկանց բացարձակ հավասարեցնել, ով էր, չգիտեմ, ասում էր՝ տվեք ինձ մի կղզի և 100 գոլ ու պոռնիկ ու ես դրանց մարդ կդարձնեմ: Չի կարող պատահել պոռնիկը փոխվի, պոռնիկը պոռնիկ էլ կմնա, էդպես էլ կմնեի: Գողը գող կլինի մինչև մահ:

- **Սարգիկ, երբ որոշակի տարիքի են հասնում, հաճախ են իրենց տեսակը երիտասարդների ու մանուկների մեջ փնտրում: Դուք ձեր տեսակը տեսնո՞ւմ եք այսօրվա երիտասարդների մեջ:**

- Կերպարներ են, ինձ նման շատերը կան: Ինձ նման էլ չլինեն, մեր տեսակը նույնն է: Նույնն է տեսակը, և ես մի տեսություն ունեմ. մարդը իր երեխայի մեջ չէ, որ պիտի հավերժի, այլ Ազգի մեջ: Որովհետև երեխան դառնում է ազգ: Ես մեր ազգի մեջ եմ: Ոչինչ չի կորչում: Ազգից ծնվել են, ազգի մեջ էլ կփոշիանան:

Հ.Գ. Գրականություն և մշակույթ գնահատող, սեփական երկրի տաղանդների վրա դողացող երկրում Աղասի Այվազյանի նման գրողը և մտավորականը (չէ՞ որ մեր իրականության մեջ այդպիսիք եզակի են) հիվանդության պահին մեծակ չէր լինի: Տխուր է, բայց սա է մեր իրականությունը:

Անահիտ ԵՍԱՅԱՆ

(դուստրն էլ էր ներկա գրույցին), ու հանկարծ միանգամից ոտքի կանգնեց ու մեզ հրաժեշտ տվեց. «Տղաներ, խնդրում եմ գնացե՛ք. եթե մի քիչ էլ մնաք, արդեն լաց կլինեմ»:

Իսկ մինչ այդ, երբ հարցրել էինք, որ եթե իրեն բնակարանով, աշխատանքով ապահովեն, կվերադառնա՞ հայրենիք, նա պատասխանել էր՝ բերեք ռեալ բաներից խոսենք:

Ջրուցեց Ռուսլան ԹԱԹՈՅԱՆԸ

Աղասի ԱՅՎԱԶՅԱՆ

# ՉԱՐԼԻ ԻՆՔՆԱՏԻՏԻՆՈՍՅԱՆԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀՈԳԵԲՈՒՅԺԸ

Իմ «ես»-ի մարդկային լրացի մոտակա ու հեռավոր շերտերի մեջ էր տեղ գրավել Չարլի մականունով բացթողնված արտիկը: Պատանեկությանս կուռքն էր Չարլին, մեր քաղաքի չեմպիոնը, որի ամեն ինչն էինք ընդօրինակում, սակայն ընդօրինակել նրա խիզախությունը, մարմնի կառուցվածքն ու հարվածների ուժը մենք չէինք կարող և հետաձգում էինք ապագային: Յուրս ունեինք, որ ժամանակի ընթացքում, հասունանալով, գուցե մենք էլ կարողանանք նմանվել նրան: Չարլի էին ասում բոլորը, որովհետև Ինքնատիտիոսյան ազգանունը դժվար էր արտասանել, հետո էլ բռնցամարտիկների անունները հարվածի նման պիտի հնչեին...

- Խփիր. Չարլի... Գոռում էինք մենք՝ կոկորդներս պատռելով: - Խփիր, Չարլի...  
 - Օպերկոտո՞վ... օպերկոտո՞վ... Չարլի...  
 - Աջ խուկդ ցույց տուր... Սպանիր դրան, Չարլի...  
 - Ձեքդ աշխատացրու, Չարլի, ջեքերդ, ջեքերդ...

Տեսնո՞ւմ եք՝ ոնց էր սազում Չարլի անունը բռնցքամարտին:

Երեսուն մարտ և ոչ մի պարտություն: Ի՞նչը կարող էր ավելի պատկառելի լիներ մեզ՝ պատանիներին համար... Ո՛չ դերասանները, ո՛չ երաժիշտները, ո՛չ էլ ուսուցիչները չէին կարող փոխարինել նրան: Բայց որ ամեն ինչ վերջ ունի՝ ես իմացա շատ տարիներ անց: Ժամանակի խորհուրդը մեզ դեռ չէր բացվել... Ես Չարլիի պարտությունը չտեսա... Նա շինված թողել էր այն բանից հետո, երբ նրան դաժան նուկաուտի էր ենթարկել ԽՍՀՄ չեմպիոնը: Ուղեղի ցնցումով նրան տարել էին հիվանդանոց...

Ես Չարլիին հանդիպեցի, երբ նա արդեն հիսուն տարեկան էր: Եվ եթե նմանվեինք այն փոքրիկ ժամանակահատվածի Չարլիին, ինչը մեր պատանեկության երազանքն էր, սպա հիմա պիտի գտնվեինք նրա այսօրվա վիճակի մեջ: Իսկ նրա վիճակը այսօր ողբալի էր: Դժվար էր նրան ճանաչել. կուրծքը ներս էր ընկել, բերանում մի քանի ատամ էր մնացել, քայլում էր ոտքերը քարշ տալով՝ առանց գետնից բարձրացնելու, աչ ձեռքը դողում էր, ձախը իրանին էր գամված... Այս բոլորը դեռ ոչինչ, եթե զոնե հոգեկանը տեղը լիներ... Նուկաուտից հետո Չարլիին մի կերպ փորկել էին՝ մարմինը կյանք էին մտցրել, սակայն ուղեղի վնասվածքին ճար չէին գտել: Հայտնի է՝ տարեց բռնցքամարտիկների սովոր մարտ տառապում է նյարդային խանգարումներով... Չարլիի վիճակը առավել ծանր էր...

Ո՞ր էր այն Չարլին, որի ոտքերը ձինգի վրա գծում էին երկրաչափական բոլոր ուղվանկարները, մեջքի մկանները խաղում էին դաշնամուրի ստեղծների նման, կամքը պատռում էր կեղևը մարմնի... Ո՞ր էր Միքելանջելոյի քանդակած կերպարը...

Չարլիի այսօրվա դրսևորված դահիճն էր մեր պատանեկության ժամանակահատվածի... Եվ տխրում էինք մենք, իսկ Չարլին ժպտում էր դատարկ հայացքով... Եվ մտածում էի ես, որ մարդը իր մի կյանքի ընթացքում ծնվում է մի քանի անգամ... Չարլին այլևս Գառնիկ Ինքնատիտիոսյանն էր... Հոգեկան արատով տառապող ծերավուրց Գառնիկը...

Չգիտեմ ի՞նչը դրդեց, որ ես մոտենամ նրան... Թերևս արդարացնելու համար, որ իմ երազանքը չիրականացավ... Որ ես չունեցա Չարլիի կյանքի այն փառավոր հատվածի ուժն ու գեղեցկությունը, առնականությունն ու հաղթանակի կամքը... Գուցե ինքս ինձ ապացուցել էի ուզում, որ միևնույն է ամեն ինչ աշխարհիս վրա՝ ուժե՞ղ ես, թե՞ թույլ, խիզա՞խ ես, թե՞ վախկոտ... Թերևս մխիթարել էի ուզում ինքս ինձ, որ անցողիկ է ամեն ինչ... Գուցե նենգամտորեն հաստատել էի ուզում, որ այս ժամանակը իմն է, իմ թուլությանն է, որ այսօրվա իմ թուլությունը իշխում է Չարլիի շենշող անցյալի վրա...

- Չարլի... վարանքով ձայնեցի նրա ետևից, և ձայնս խառնվեց Չարլիի ոտքերի քստքստոցին: - Չարլի... - նորից, ավելի հաստատուն, ձայնեցի ես: Սակայն նա շարունակում էր իր քստքստոցով քայլքը առանց ետ նայելու: Մտուցա նրան, մի քանի քայլ արեցի կողքով ու՝

- Բարև... Չարլի... - արտաբերեցի ես: Չարլին, մի փոքր ուշացած, գլուխը թեքեց իմ կողմը: Նրա հայացքից մարմինս փշանգվեց: Ի՞նչ կար նրա ճիպոտ աչքերի մեջ... Անցած ժամանակը... Բռնցքամարտի մեծպիտոն Չարլի... Չգիտեմ... Գիտեմ միայն, որ ես զգացի իմ պատանեկությունը... Նրա հայացքի մեջ շենշող Չարլիից մի փշուր էր մնացել, նրա կողքին իմ պատանեկությունը...

Նա ոչինչ չասաց, գլուխը ուղղեց դեպի առաջ և շարունակեց իր երթը: Այդպես բավականին ժամանակ մենք քայլում էինք միասին, կողք կողքի:

- Դուք մեր կուռքն էիք... - վերջապես կնկմացի ես: - Ձեր աչ խո՛ւկը... օպերկո՛տը, ջեքե՛րը...

Չարլին դեմքը նորից դարձրեց իմ կողմը և ոչինչ չասաց: Մենք շարունակեցինք լուռ քայլել, ես խոսքեր էի որոնում՝ նրա հետ ինչ-որ ձևով հաղորդակցվելու համար, բայց արդեն ասածիցս ավելի ոչինչ չէի գտնում: Փողոցի ինչ-որ մի հատվածում ես ետ ընկա՝ թողնելով Չարլիին սեփական քստքստոցի հետ:

Մեր հանդիպումը կարող էր մի փոքրիկ դրվագ դառնալ, որը կամաց-կամաց կորչելու էր, անհետանալու էր մարդկային հեղինակի հիշողության մշուշի մեջ, եթե մի սովորական միջօրեային Չարլին չամացներ իմ տան պատուհանների առջևով:

- Բարև, Չարլի... - ձայնեցի ես: Այս անգամ Չարլին միանգամից չռջվեց

իմ կողմ: Ժպտաց: Ժպտոյի մեջ կուռակված ցավից առկայծում էր լուսավոր մի խլակ: Խլակը ներքաշեց ինձ իր խորքը, որը հեռապատկեր ուներ... Այդ խլակը հաղորդակցության միջոց էր... Եվ Չարլին դա զգաց, և՛ ես դա զգացի...

- Ո՞նց ես, Չարլի...  
 Չարլին գլխով արեց:  
 - Լա՞վ ես, - հերթապահ խոսքով փորձեցի շարունակություն գտնել:  
 Չարլին նորեն գլխով արեց:  
 - Ուրախ եմ, Չարլի... - ասացի ես:  
 Չարլին նորեն գլխով արեց և դանդաղաքայլ հեռացավ:

Երկու օր հետո Չարլին հայտնվեց պատուհանիս տակ և ակնապիշ հայացքը ուղղեց իմ կողմը: Ամեն ինչից երևում էր, որ ինձ դուրս էր հրավիրում: Ես արտորանքով զննեցի նրա մոտ:

- Ո՞նց ես... - կրկնեցի ես:  
 Եվ Չարլին վերջապես խոսեց:  
 - Վախենում եմ...  
 - Ո՞վ... Ի՞նչ... - չհասկացա ես:  
 - Մարդի՛կ... Մարդի՛կ...  
 - Վախենում եմ...  
 - Վախենում եմ... Ինձանից...  
 - Ինչո՞ւ... - հավուր պատշաճի հարցրեցի ես՝ քաջ գիտեմալով պատճառը:  
 - Ինձանից խուսափում եմ...  
 - Հիմար մարդիկ շատ կան... - անհաջող մխիթարեցի ես: - Երևի քեզ չեն ճանաչում...

- Ինձ գոյ տեղ են դնում... - ժպտալով արտաբերեց Չարլին:  
 - Այ քեզ բա՛ն... - իբր թե զարմացա ես:  
 - Բայց ես գի՞տեմ...

- Գիտե՞մ... - խնդմնոցով արտաբերեցի ես: - Գի՞տը իրե՛նք են:  
 - Չէ՛... Իրե՛նք էլ գի՞տեմ... - ասաց Չարլին, և ես զարմացա: Չարմացա, որովհետև ինձ զգուշացրել էին, որ նա հոգեբուժարանից դուրս գալուց հետո անկարող է հսկել իր մտքերին:

- Դու չե՞ս վախենում ինձանից, - հայացքը գետնին՝ հարցրեց Չարլին:  
 - Չէ, ի՞նչ ես ասում... - առաջ ընկա ես: - Ինչո՞ւ պիտի վախենամ...  
 Չարլիի դեմքին ժպիտ սստեց.  
 - Տեսնում եմ...

Հետո լուռ ընդմիջման ընթացքում նա ավելացրեց.  
 - Ես խենթ չեմ... Ես տանուլ տված մարդ եմ...

Ուզում էի թվել նրան իր հաղթանակների քանակը, բայց մի պահ ուղեղումս հանկարծեց միտքը, որ նա նկատի չունի ձինգը, այլ խոսքը վերաբերում է ճակատագրին... Մի քանի, որը ձինգի վրա անհնար է փոխել...

Հետզհետե ես մնացի Չարլիի միակ բերեկամը: Ամեն կերպ աշխատում էի թաքցնել, զգացնել չտալ իմ վերաբերմունքը նրա հոգեկանի նկատմամբ: Սակայն այդ անիծյալ հիվանդությունը հոտ ուներ, և

ուժ ու համբերություն էր պետք նրա միջավայրում գտնվելու համար:

Այժմ՝ պատմվածքի վերնագրում նախարկած Երիտասարդ հոգեբույժի ճակատագրի մասին:

Հիվանդանոցի պատմության մեջ այդքան երիտասարդ բաժանմունքի գլխավոր բժիշկ չէր եղել: Նրան հրաշամանուկ էին կատակով անվանում տարեց, քաջափորձ պրոֆեսորները: Նրան պատկառում էին բուժքույրերը... Պատկառանքը սիրո հանդերձանք է ընդունում սովորաբար: Եվ այդ հանդերձանքի մեջ շենշում էր Երիտասարդ հոգեբույժը: Նա հպարտ էր, իշխանավոր, մասնագիտության՝ իր տարիքին անհամապատասխան հմտությամբ, կամքը նրա սավանի պես փռվել էր ամբողջ հիվանդանոցի վրա... Նրա մասին հիացմունքով էր պատմում նույնիսկ Չարլին: «Իմ ձեռքի տակ մեծացավ, - ասում էր Չարլին: - Քանի-քանի անգամ ես նրան փրկել եմ թաղի տղաների ծեծկռտուքից: Բայց հիմա ինձ մարդու տեղ չի դնում, - տխուր ավելացնում էր նա: - Ինձ հիվանդի տեղ է դնում, պակասավորի տեղ... Բայց ես հիվանդ չեմ... Պակասավոր չեմ, - ժպտալով արտաբերում էր Չարլին: - Դու հո տեսնում ես...»: - Հա, իհարկե, - ասում էր ես: Եվ նա բերանը ծռելով համաձայնություն էր արտահայտում:

Մեր հանդիպումները որոշ ժամանակ դադար ունեցան. ես մեկնել էի գործուղման: Երբ վերադարձա, Չարլիին տեսա փողոցում: Նա մի նոր վիճակ էր ապրում: - Հիշո՞ւմ ես, - ասաց նա, - ես քեզ պատմել էի իմ հոգեբույժի մասին... - Հիշում եմ, - ասացի ես: - Նա քո ընկերներից էր... - Ո՞վ էր... - Վիկտորը... Վիկտորը...

Ես չէի հիշում Վիկտոր անունով որևէ մեկին, բայց պարզ էր, որ Չարլիի երկրպագուները բազմաթիվ էին մեր քաղաքում: Եվ Չարլին սկսեց նշել Վիկտորի արժանիքները, թվել հիվանդանոցում նրա արած գործերը... Չարլին ամուր բռնեց թև, ասես վախենալով, որ կարող եմ փախչել, և մինչև խոսել սկսելը, ինչ-որ

բան մտնտալով՝ բավականին տարածություն ինձ առաջնորդեց: Եվ վերջապես, շուրթերը ծռնելով, որը նրա աշխուժության հատկանիշն էր, արտաբերեց.

- Հիշո՞ւմ ես, չէ՞... հոգեբույժ Վիկտորին... կրկնեց և, առանց պատասխան ստանալու, շարունակեց. - Գժի տեղ են դրել... Այսինքն՝ հիվանդացել է... Պատկերացնո՞ւմ ես՝ հոգեբուժարանի գլխավոր բժիշկը՝ հոգեկան հիվանդ:

Ես զարմանալ էի ուզում, բայց չզարմացա, որովհետև նրա ասածը լրիվ հավատ չընծայեց:

- Չե՞ս հավատում... - այն է պիտի ջղայնացար, ես շտապ կանխեցի.

- Հավատում եմ... - և ասածս ավելի հավաստի հնչեցնելու համար, ավելացրեցի. - Տես, է՛... Ո՞վ կմտածեր...

- Աշխարհի բանը սա չի՞... - հարցնելով հաստատեց նա: - Ես միշտ համոզված էի, որ աշխարհի բանը սա է... Շրջապատս չէր հավատում... - Եվ կրկնեց. - չէ՛ր հավատում, չէ՛ր հավատում, չէ՛ր հավատում... - և միտքը ուրիշ կողմ գնաց. - Չէր հավատում, որ ես պակասավոր չեմ... Պակասավոր չեմ, ախր...

Ինձ մնում էր ինչ-որ բան ասել համերաշխության համար.

- Աշխարհը անհավատ է... - մրթնրթացի ես՝ ներքնապես տանջվելով խոսքիս անհամությունից:

- Ուզո՞ւմ ես զարմանալ, - այնքան լուրջ հարցրեց նա, որ ես այլևս մոռացա նրա հոգեկան, մեղմ ասած, անհավասարակշռության մասին:

Լուռ ժպտացի, որ համաձայնության նշան էր:

- Դե՛, զարմացի՛ր... արտաբերեց Չարլին և մի պահ ընդգծված լռությունից հետո, արտաբերեց. - Մենք հանդիպում ենք... Ես ու նա... Հոգեբույժն ու ես... Հասկանո՞ւմ ես... Ես նրան մխիթարում եմ... Ես հաճախում եմ նրան, միրգ եմ տանում...

Իսկապես զարմացա: - Նա է ինձ իր մոտ կանչում... Գանգատվում է իր վիճակից... որ բուժքույրերը նրան այլևս չեն հարգում, բանի տեղ չեն դնում...

- Որտե՞ղ է նա... - արդեն լրջորեն պատմության մեջ մտա ես, - հիվանդանոցո՞ւմ...

- Հա՛... իր հիվանդանոցում... Այն մահճակալին, որի վրա ես էի պառկած... Եվ բուժքույրերը նրան՝ նախկին գլխավոր բժշկին, բանի տեղ չեն դնում... Դա է նրա անհասկանալի վիշտը... Իր աշխատակիցները նրան պակասավորի տեղ են դնում այլևս... Նա ինձ հետ է ուզում հանդիպել, որովհետև գիտի, հասկանում է, որ միայն ես գիտեմ, որ նա պակասավոր չէ... Ես նրան հույս եմ տալիս... Համոզում եմ, որ նա հիվանդ չէ... Բացատրում եմ հիմնիկա իր դրության սովորականությունը... Մարդու բնական վիճակն է... Աշխարհի բանը դա՛ է... Ամբողջ աշխարհն է տեղավորվում այդ մահճակալի մեջ...

Նա վերստին վերադառնում է իր հիվանդությանը, մտածեցի ես, քանզի նրա այս վերջին արտահայտությունը դուրս պրծավ սթափ մտքերի ոլորտից՝ շեշտակի տարբերվելով մինչև այժմ նրա ցուցաբերած տրամադատությունից:

- Մի մահճակալի մեջ, - մեքենաբար կրկնեցի ես:

- Հա՛, հա՛... - աշխուժաբար հաստատեց նա:

- Ամբողջ աշխարհը... բոլո՞րը, - հեզմանտորեն հարցրեցի և տեղնուտեղը զղջացի՝ ասածիս անպատշաճությունը զգալով:

Չարլին շատ խելոք լռեց, և նրա լռությունը իմ մեջ առաջացրեց նոր վերաբերմունք՝ «մի մահճակալ»-ի նկատմամբ: «Ինչ կա որ, պատկերավոր խոսք է... Եվ կարծես վատ չէ... Աշխարհը՝ հոգեբուժարանի մի մահճակալի մեջ»: Եվ ես ուշացած ժպտացի: Ժպտալով Չարլին հանեց լռությունից, և նա սկսեց երկար ներկայացնել սեփական մտքերը կյանքի, ճակատագրի վերաբերյալ. «Աշխարհի բանը սա՛ է»:

Կեսգիշերին մենք բաժանվեցինք: Տուն վերադառնալիս՝ ճանապարհին մըտքիս մեջ նորեն վերակենդանացավ քաղաքի չեմպիոն Չարլիի շենշող կերպարանքը և պատանիների մեր խումբը... մի մահճակալի մեջ: Եվ կրկնեցի Չարլիի խոսքը՝ «Աշխարհի բանը սա՛ է... Աշխարհի բանը...»:

# ՕԳ ՎԱՃԱՌՈՂԸ

Այդպես է կոչվում ռուս գրող Ալեքսանդր Բեյլակի ֆանտաստիկ վիպակը, որը լույս է տեսել շուրջ 80 տարի առաջ: Այդ գործում խարազանվում է ազաի կապիտալիստը, որը ցանկանում էր օդի մենաշնորհի ձեռք բերել: Սակայն ոչ մի ֆանտաստիկ մտքով անգամ չէր անցնի, որ 21-րդ դարում հայ ձեռներեցները նույնպես կորոշեն Երևանի վերնիստում իրենց հայրենակիցների վրա ծախել Հայրենիքի կոնսերվացված օդը (լուսանկարում), որի պարու-



նակությունն է (ըստ տուփի մակագրության) Երևանի օդը 20%, Լեռնային օդը 25%, Սևանի գոլորշին՝ 10%, հյուրընկալության ոգին՝ 35%, լավաշի հոտը՝ 5%, հարևանի խորովածի հոտը՝ 5%: Ապրանքը խորհուրդ է տրվում օգտագործել Հայաստանի սահմաններ-

ից դուրս՝ կարոտախտի դեպքում: Սիլուրեքահայ հայրենասեր տուրիստները այս տուփը կարող են ձեռք բերել 1000 դրամով:

## ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ

«Երևանի պատվավոր քաղաքացի» կոչմանը 1983 թվականից մինչ օրս արժանացել է 84 մարդ, որից 64-ը անկախացումից հետո:

Նշենք, որ անցյալ տարի «Երևանի պատվավոր քաղաքացի» են ճանաչվել ՀՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակների դափնեկիր, երգահան Տիգրան Մանսուրյանը, ՀՀ վաստակավոր դերասան Աշոտ Ղազարյանը, վաստակավոր լրագրող, «Ոսկե գրիչ» մրցանակի դափնեկիր, «Ոգնի» հանդեսի գլխավոր խմբագիր Արամայիս Սահակյանը և ԳԱԱ թղթակից անդամ, բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն Հայրապետ Գալստյանը:

# Մեր հյուրն է Մամվել Խալաթյանը

## իր երգիծանքով

È»½í ³ È ³ éÝ³ ß÷ áÃ

Մենք բոլորս հեզմուն ենք, թե մեր պուժուրիկ երկրում հարյուրից ավելի կուսակցություն կա, և հենց նրանք են մեղավոր, որ ընկել ենք Կոիլովի հայտնի առակի օրը:

Այնինչ, մեր տունը քանդում են մանկավարժները, հատկապես լեզվաբանները:

Մեր այսօրվա վայր-գործիչները որտե՞ղ դաստիարակվեցին, ձեզ են հարցնում: Ինչու՞ չենք պատասխանատվության կանչում նրանց դաստիարակներին՝ խոտան արտադրանք տալու մեղադրանքով: Հայոց լեզվի հերն անիծվում է, նրանց հեշ պետքն էլ չի:

Պարոնայք, դուք չե՞ք նկատում, որ «ղեկավարել» բառը «ղեկավերել» է դարձել, «ընկերություն» բառը «ընդդիմություն»: Բոլորովին անհասկանալի է, թե ինչպե՞ս է լինում, որ Ամերիկյան համալսարանը երևանում հայոց լեզվի դասավանդման հարցերին նվիրված գիտաժողով է անցկացնում, իսկ Հայաստանի լեզվաբանները մեզ հավաստիացնում են, թե «անեսթեզիոլոգ» բառը, հանուն մայրենիի անադարտության, պետք է գրել և արտասանել «թմրաքունաբանագետ»... Դուք պատկերացնու՞մ եք այն անեսթեզիոլոգի վիճակը, որն աշխատում է Պեղարքունիքի մարզում...



Սա ի՞նչ խառնաշփոթ է: Նախկինում ասում էինք «կուսակցություն», հասկանում էինք՝ Լենին: Այսօր ասում ենք՝ կուսակցություն... ոչինչ չենք հասկանում:

Ասում էինք «եղբայրություն», հասկանում էինք՝ «միասնություն»: Այսօր ասում ենք միասնություն, հասկանում ենք՝ տուրուղմփոց: Ասում էինք՝ երևան, հասկանում էինք Հայաստանի մայրաքաղաք:

Այսօր ասում ենք Երևան, հասկանում ենք քաղաք-հանրապետություն, որում դաշնային հիմունքներով տիրություն են անում Ֆրանսիան, Պարսկաստանը, Ռուսաստանը, Կուվեյթիան և թաղային հեղինակությունները:

Նախկինում ասում էինք՝ Լևոն, հասկանում էինք Իշտոյան: Այսօր ասում ենք Լևոն... ոչինչ չենք հասկանում:

Նախկինում ասում էինք՝ Դեմիրճյան, հասկանում էինք Կարեն Սերոբիչ: Այսօր ասում ենք՝ Դեմիրճյան, հասկանում ենք, որ... ոչինչ չենք հասկանում:

Արտաշես Փեղամյանն էլ գլխներիս դաճեմարքա Համլետ է դարձել. գնում-գալիս է, վրա է տալիս, թե իր պապենական պրեզիդենտությունը ձեռքից խլել են...

Եվ այդ ամենը կատարվում է հարազատ մայրենի լեզվով:

Պարոնայք լեզվաբաններ, այս ի՞նչ բերեցիք մեր ոսկեխոսիկ լեզվի գլխին: Ձեզնից որևէ մեկը կարո՞ղ է, արդյոք, ասել, ստուգաբանել, թե ինչու՞ «տեր» մասնիկը կրող ազգանվամբ նախագահի օրոք անտերություն էր, իսկ «քոչ» արմատն ունեցող ազգանվամբ նախագահի օրոք՝ շատերը քոչեցին երկրից...

## իր անեկդոտներով

\*\*\*

- Ճի՞շտ է, որ երջանկությունը փողի մեջ է:
- Ճիշտ է, երջանկությունը փողի քանակի մեջ է:

\*\*\*

- Ինչու՞ են կանայք ավելի հաճախ տղամարդկանց հրապուրում իրենց արտաքինով, իսկ խելքով՝ համարյա երբեք:
- Որովհետև տղամարդիկ հաճախ են հիմար լինում, բայց շատ հազվադեպ՝ կույր:

\*\*\*

- Կարելի՞ է աղքատ աղջկան երջանկացնել:
- Կարելի է: Բայց ավելի լավ է հարուստին դժբախտացնել:

\*\*\*

- Ի՞նչ է խոսքի ազատությունը:
- Դա լռելու գիտակցված անհրաժեշտություն է:

\*\*\*

- Ի՞նչ է ազնվությունը:
- Դա այն է, երբ ուզում ես մի բան ասել, բայց ասում ես ճշմարտությունը:

\*\*\*

- Կարելի՞ է գնել ազնիվ մարդուն:
- Գնել՝ ոչ, ծախել՝ կարելի է:

\*\*\*

- Ի՞նչը չի կարող երկար շարունակվել:

- Այլանդակությունը, որոշ ժամանակ անց՝ այն սովորական երևույթ է դառնում:

\*\*\*

- Ի՞նչ տարբերություն կա հավատարիմ ու անհավատարիմ ամուսինների միջև:
- Մեծ, հավատարիմ ամուսինը երբեմն խղճի խայթ է զգում:

\*\*\*

- Ի՞նչ տարբերություն կա տղամարդկանց ու կանանց ցանկությունների միջև:
- Կինը շատ բան է ուզում մեկ տղամարդուց, տղամարդը մեկ բան է ուզում շատ կանանցից:

\*\*\*

- Կարելի՞ է ամուսնանալ գեղեցիկ, խելացի, հոգատար և հարուստ կնոջ հետ:
- Կարելի է, եթե չորս անգամ ամուսնանաս:

\*\*\*

- Ո՞րն է մոդայի և փառքի տարբերությունը:
- Մոդան երբեք ետմահու չի լինում:

\*\*\*

- Ինչու՞ ուսանողին չի կարելի ամուսնանալ:
- Երբ զբաղվի միայն կնոջով, «պոչ» կունենա, զբաղվի միայն ուսմամբ՝ «եղջյուրներ կաճեն»: Իսկ եթե երկուսով էլ զբաղվի, «սմբակները կտնկի»:

\*\*\*

- Ե՞րբ են կնոջ հետ վարվում շան պես:
- Երբ նրանից հավատարմություն են պահանջում:

\*\*\*

- Ո՞ր կինը կարող է միշտ անսխալ ասել՝ որտեղ է իր ամուսինը:
- Այրի կինը:

\*\*\*

- Ձեզ ինչու՞ ձերբակալեցին:
- Կաշառք էի վերցրել:
- Իսկ ինչպե՞ս ազատեցին:
- Կաշառք տվեցի:

\*\*\*

- Մուխի, եղ երեսդ խի՞ ա կտրատվել:
- Ապո, գրիպից աս:
- Էդ ո՞նց...
- Ա դե լուսամուտի մոտ փռշտացի, էլի...

\*\*\*

- Վալոդ, հարսանիքիցս առաջ կնգանս էնքան սիրըմ էի, որ ուզըմ էի ուտեն:
- Բա հմի՞...
- Հմի էլ փոշմանել են, որ չկերաս:

\*\*\*

- Սխի, եղ աչքիդ տակը խի՞ ա կապտել:
- Մարդս ա խփել:
- Բա ես հենց գիտեի՝ կամանդիրովկըմ ա:
- Ես էլ հենց գիտեի...

# Գագիկ Անպրոնյանը իր երգիծանքով

## Օրինակելի դպրոցում

Դպրոցի տնօրենի մոտ է բեղ-մորուքով մի մարդ:  
 - Եկել եմ՝ գործի ընդունես...  
 - Ի՞նչ գործ:  
 - Ինչ տաս՝ կանեմ...  
 - Մի քիչ չափավոր խոսեք... Ի՞նչ մասնագետ եք...  
 - Այսինքս՝ ինչ ուստա՞ եմ: Ես բազմափեշակ ուստա եմ:  
 - Հա՞... Աշխարհագրությունից ո՞նց ես...  
 - Էն էլ ոնց եմ...  
 - Կասե՞ս ինչով է աչքի ընկնում Չինաստանը...  
 - Չինաստանում զարգացած է չինաբուծությունը: Դրա համար էլ չինացունց կուբաներերով են հաշվում...  
 - Լավ... Ֆիզիկայից ո՞նց ես...  
 - Ֆիզիկայից էլ ոնց եմ...  
 - Լույսի արագությունը թեման կարո՞ղ ես բացատրել երեխաներին...  
 - Մի սիսթեմ... Հալա ես գանավետը ծածկիր: Ապրես: Տեսա՞ր ոնց մթնեց: Դե հիմի կաբինետիցդ մի հրոպե դուրս արի... Հենց որ գոռամ՝ երեկույուչորս, դուռը բացի ու վագրով ես պատին հասի: Ապրես: Երեկույուչորս... Արագ, արագ: Ապրես: Դե հիմի քանոնը ինձի: Ես մեկ, էս երկու, իրեք... ըիր... Դռնից մինչև պատը. կանի չորս մետր 15 սմ... Էդ էլ քո լույսի արագությունը... Կենսաբից էլ մի գիտափորձ ունեմ. Տոկը միացնում եմ ճանճի ոտներին, քոչկոտում է, ոտքերը պոկում եմ, թարկում է: Ուրեմն՝ անտեր ճանճերն էլ ոտքերով են խոսում...  
 Տնօրենն ապշած է:  
 - Լավ, գնացեք, ձեզ կկանչենք...

- Հագիր էկել եմ, էլ ինչի՞ կանչես... Վարդանովնա, ես դայդին որտղ եմ... Գիտե՞ս, հեյվարա արջեր եմ խփում... հերու էս վախտը կլիներ, մեկին քըրըխկ... Վիրավոր ծորն ընկավ... Ջրի ափին հասա, գյուլլեցի... Որ գյուլլեցի, վերջը տվի, որ տվի, սկսի քերթել... մի ոտը գցեցի էս ուսս, էն մինն էլ էս մի ուսս...  
 Ներս է մտնում ուսմասվարը, ժողովից հարցնում:  
 - Ժողով անայաման պիտի անենք: Դպրոց հո չէ, իսկական փողոց... Շունը տիրոջը չի ճանաչում... Ուսուցիչը աշակերտին է հայիոյում. աշակերտը՝ ուսուցչին... էլ կողտոտ, էլ սրիկա... Նա էլ՝ կողտոտն էլ էս դու, սրիկան էլ: Պիտի արմատախիլ անե՞նք, թե չէ...  
 Ուսմասվարը հեռանում է:  
 - Հետո, հետո...  
 - Մտահան արի՝ էն որտե՞ղ մնացի...  
 - Մի ոտը մի ուսդ գցեցիր, էն մի ոտն էլ էն մի ուսդ...  
 - Հա... Վարդանովնա ջան, էդ դայդի կնիկ տեհած չկայի կյանքումս...  
 - Լավ: Հեռացեք, թե չէ սիրտս կկանգնի...  
 - Ցավդ տանեմ, ախր ինձ ինչի՞ ես քշում... Ես լիքը ծրագրերով եմ էկել մտղ... Երեխեքի հետ էնքան փետի գդալներ սարքենք որ...  
 - Որ ի՞նչ անենք...  
 - Արևդ ապրի, բա փիթին ինչով են ուտում... Եզուց-էլօր փիթիանոցը որ բացենք...  
 - Ի՞նչ փիթիանոց, որտե՞ղ բացենք...  
 - Ֆիզկուլտի դահլիճում...  
 - Էդ չեղավ, դահլիճն արենդով ենք տվել...  
 Հանքային ջուր են փակում:  
 - Պարվալում կբացենք...  
 - Նկուղում ավտովագողներն են...

- Կռիշ կտանենք...  
 - Բա օղին որտե՞ղ լցնենք...  
 - Դե, առաջին հարկից բիլիարդանոցը կհանենք, երկրորդ հարկ կտանենք...  
 - Դասերն էլ կազինոյում կանենք... Լավ, մի բան կմտածենք...  
 Ներս է մտնում ֆիզկուլտուրայի ուսուցիչը:  
 - Ընկեր ֆիզկուլտուրնիկ, դու դասի չէ՞ս...  
 - Բա ո՞նց...  
 - Ո՞նց ես դասի, որ տնօրենի կաբինետում ես...  
 - Երեխանց հանձնարարություն եմ տվել...  
 - Ի՞նչ հանձնարարություն...  
 - Մարշ դեպի տուն...  
 - Ուրիշ ի՞նչ ունես ասելու...  
 - Խաշը պատրաստ է...  
 Այցելուն. « Մի յաշիկ օղին էլ ինձանից»...  
 Ֆիզկուլտուրայի ուսուցիչ. «Յա, էս դո՞ւ ես, ախպեր...»:  
 Այցելու. « Բա սև շունն ա՞»:  
 Փաթաթում են իրար:  
 Տնօրեն. « էս դուք իրար ճանաչում եք»:  
 - Բա ո՞նց, մի կամերում էրկու սրոկ ատքիտ ենք արել...  
 - Հասկացա: Դե դուք գնացեք խաշ կերեք, ինձ կներեք, ժողով ունեմ, ես չեմ կարող... Սա հո դպրոց չէ... Խուժանանոց է, ուրիշ ոչինչ...  
 - Տո դե, Վարդանովնա, դու էլ թեմա ես գտել արծարծելու... Դրանց հերն էլ անիծած, վեր, խաշը փչացավ...  
 - Տո դե ճիշտ ես ասում, է: Դրանց սրիկա հերն են անիծել, թող իրար էնքան ուտեն որ... Գնացինք...

## Մի անգամ խանութում

- Կռիշ եմ ուզում...  
 - Կռիշի՞կ:  
 - Չլսեցի՞ք...  
 - Համոզվելու համար եմ հարցնում:  
 - Կռիշ եմ ուզում...  
 - Տղամարդու՞, թե՞ կնոջ:  
 - Կնոջ նմա՞ն եմ:  
 - Մեզ մոտ կանանց կռիշկներ են: Դիմեք մյուս բաժին:  
**Երկրորդ բաժնում**  
 - Կռիշ եմ ուզում...  
 - Ամառայի՞ն, թե՞ ձմեռային:  
 - Չմեռային:  
 - Փա՞կ, թե՞ կիսափակ:  
 - Փակ:  
 - Հաջորդ բաժնում հարցրեք:  
**Երրորդ բաժնում**  
 - Իմացա, ձմեռային փակ կռիշկ եք ուզում:  
 - Այո:  
 - Կաշվի՞ց, թե՞ որն էլ լինի:

- Էդ ո՞րը կլինի...  
 - Դերմանտիմից:  
 - Ձուտ կաշվից: Ո՞ր բաժին դիմեմ...  
 - Կողքի:  
**Չորրորդ բաժնում**  
 - Տղամարդու, ձմեռային, փակ, կաշվից կռիշկ եմ ուզում...  
 - Բարի: Դուք ընտրության լայն հնարավորություն ունեք:  
 - Վերջապես...  
 - Կապիչո՞վ...  
 - Ո՞ր բաժին դիմեմ...  
 - Էստեղ:  
 - Այրի արևդ... Տվեք:  
 - Ո՞ր գույնով՝ սև՞, վարդագույն...  
 - Իմ սև սրտին՝ քո վարդագույն հավեսին... Սևըրը...  
 - Դիմեք հինգերորդ բաժին:  
**Հինգերորդ բաժնում**  
 - Տղամարդու... ձմեռային...

փակ... զուտ կաշվից... սև կապիչով...  
 - Կապիչով ի՞նչ...  
 - Կռիշ: Ուրիշ էլ ի՞նչ...  
 - Գլխարկ էլ ունենք...  
 - Մի հատ էլ գլխարկ:  
 - Ի՞նչ գույնի...  
 - Կյանքի գույնի, սև սաթի պես սև...  
 - Մերը կաթի պես սպիտակ են:  
 - Արևդ ապրի, կռիշկ տվեք: Կապիչը՝ սև, երկար, որ կարողանամ կախվել...  
 - Իսկ կռիշկն ինչ գույնի՞:  
 - Ծեծռան... չհագած... մի գույգ... այսինքն՝ երկու հատ... քիթ-քիթ նայող...  
 - Վերջապես, ի՞նչ գույնի...  
 - Ո՞ւն դիմեմ...  
 - Տնօրենին:  
**Տնօրենի մոտ**  
 - Չեր աշխատողները խիղճ ունե՞ն, թե՞ չէ՛ն...  
 - Նրանք մանրամասներն են

պարզել:  
 - Պարզեցի՞ն...  
 - Այո, գիտենք՝ ինչ կռիշկ եք հավանում:  
 - Դե տվեք, էլիի...  
 - Միայն վերջին մի հարց՝ մորթո՞վ, թե՞ առանց մորթու եք ուզում...  
 - Երևի ուզում եք ինձ լրիվ մորթեք... Մորթով տվեք...  
 - Մորթին սև՞, սպիտակ...  
 - Ո՞րն ունեք...  
 - Ոչ մեկն էլ մե՞նք չունենք, բայց վաղն եկեք՝ բարով մաշեք...  
 - Ինչ է, Իտալիայի՞ց եք բերելու...  
 - Ոչ, դիմացի խանութից...  
 - Ի՞նչ խանութ...  
 - Կռիշիկի:  
 - Բա, սա ի՞նչ խանութ է, որ...  
 - Բանջարեղենի...  
 - Ներեցե՞ք...  
 - Ոչինչ, մորեն հանցե՞ք:

# ԳՐՈՂԸ ՊԻՏԻ ՄԻ ՔԻՉ ԱՐՏԻՍԱՏ ԼԻՆԻ



Շնորհեցի **Լևոն Զավախյանը** իր կյանքի 57 տարիներին գրել է երեք գիրք ու դեռ կգրի հավանաբար, որովհետև լեցուն է կյանքով ու նորանոր կերպարներ պեղելով, իր անցյալը զննելով ու իրեն բացահայտելով:

Կյանքում մրցանակներ չի ստացել, ասում է. «Ամենամեծ մրցանակը ինձ համար էն ա, որ փողոցում մարդիկ փեշիցս քաշում են ու ասում՝ դու էն «Հայկական ժամանակում» տպվող տղեն ե՞ս, կամ թե չէ՝ Ամերիկայից գանգ են տալիս, կամ էլ... հիվանդանոցում վիրահատված Գևորգը իմ պատմվածքները կարդալիս այնպիսի բուռն ծիծաղ ա ունեցել, որ փորը պատռվել ա, ու նա ամեն տարի հունիսի 19-ին իմ ծննդյան օրը, զանգ ա տալիս ինձ, շնորհավորում ա ու ասում ա՝ քու արածն արած է՞ր, բայց ապրես, էլի գրի, ջհանդամը, թե փորս կպատռի»:

Լևոն Զավախյանը գիրք ու փող աշխատելը չի խառնել իրար, փող աշխատելու համար «Վերնիսաժում» էնքան աշխարհի ու մարդկություն է տեսնում, ինչքան աշխարհով մեկ ճամփորդողները, ասում է. «Մի անգամ «Վերնիսաժում» կանգնած էի, մի ավստրալացի տղա եկավ, ծանոթացանք, հլա ինձանից էլ բան առավ, ասի՝ արա, ի՞նչ ես անում մեր կողմերում, ասավ՝ ես ատրոպորտում իմ տեղը կանգնած աշխատում էի՝ մարդկանց պասպորտի վրա պեշատ էի խփում, որ նրանք ճամփորդեն, ու մի օր ասի՝ ես էլ գնամ աշխարհի տեսնեմ: Հիմի ես էդ ցանկությունը «Վերնիսաժում» կանգնած չունեմ՝ ավստրալացի Ֆիլիպի պես, աշխարհը «Վերնիսաժից» նույնքան տեսանելի է, ինչքան՝ եթե ճամփորդեի: Ինձ համար ամենամեծ ճամփորդությունը այստեղից Շնորհ է: Ես չեմ կարծում, որ եթե մեկը գնում է Փարիզ ու Լոս Անջելես, ինձանից շատ բան է տեսնում...»:

**- Լևոն, քո ընկերները, ծանոթները սիրում են քեզնից խոսել՝ մի օր Զավախյանն այս արեց, այն արեց, քո շուրջը ստեղծվում են պատմություններ՝ եղած կամ հնարովի: Ինչի՞ց է դա:**

- Ֆրանսիայում ընդհանրապես արվեստագետին կամ գրողին արտիստ են ասում. գրողը մինչև գրականություն գրելը ինքը պիտի տարբերվի մյուսներից, մի քիչ արտիստ լինի, այդ բանը լավ բերում է դեպի գրականություն. իսկ եթե նա գորշ անձնավորություն եղավ՝ սվաղված ամբողջ հասարակությանը, արդեն նա չի կարա գրականության մեջ անհատ դրսևորում ունենա, ու ես կյանքում իմ կենցաղով, իմ հումորով, իմ անկեղծությամբ, ինչ-որ տեղ իմ լկտիությամբ նաև, որովհետև ընձեց բաներ են մարդկանց ասում, որ ուրիշը էլ խոսքերը ասի՝ կտան աչքերը կհանեն... իսկ իմ հանդես ներողամիտ են, որովհետև զգում են, որ սիրում են իրենց... հետո ես երևի սրճարանի ֆուլկոր եմ...

**- «Կետիկնոցի»:**  
- «Կետիկնոցը» իմ վերջին հանգրվանն ա, մինչև էդ եղել ա «Սկվագնյակը», «Առագաստը»...

**- Ի՞նչ հզոր դեմքերի հետ ես նստել սրճարանում:**  
- Ես նստել եմ Խելթով Ֆելոյի հետ, նստել եմ չաղ Ֆելոյի հետ, նստել եմ Անիմանալի Ֆելոյի հետ, նստել եմ Սեյրյան Խաթալայի

յանի հետ, Վանո Սիրադեղյանի հետ, Արշակ Սադոյանի հետ... սաղ կյանքում նստել եմ, բայց ազատ եմ եղել:

**- Այնպես ես ասում, կարծես բանտ ես նստել նրանց հետ, Լևոն:**

- Դե սրճարանն էլ մի յուրահատուկ բանտ ա, էլի, եթե կյանքում ազատ ես, բանտում էլ կարաս ազատ լինես:

**- Դու Լոռվա՞ երևույթ ես, Լևոն:**

- Անկասկած. նախևառաջ ես իմ հոր ու մոր երևույթն եմ, հետո նոր՝ Լոռվա: Իմ մերը կյանքում ոչ մի տող չի գրել, բայց երկի թե գրող էր, իմ մերը խիստ քնարական էր ու բանաստեղծական, նրա բերանից ընձե՞ց խոսքեր էին դուրս գալիս, որ գետին չէին ընկնում, մնում էին օդում, իսկ մենք ահա գրող ենք կոչվում ու դողդողում ենք մեր ամեն բառի վրա, բայց թղթի վրա էլ չի մնում: Ու ես եթե իմ գրականության մեջ մի ազդեցություն ունեցել եմ, ունեցել եմ միայն Լոռվա ազդեցությունը:

**- Լևոն, չե՞ս ուզում փոխել փող աշխատելու միջոցը, այն է՝ արծաթ չծախես «Վերնիսաժում», գրագետ մարդու գործ անես, կամ մի պաշտոնից-բանից ունենաս...**

- Ես կոմունիստների ժամանակ լավից-վատից պաշտոն վարած մարդ եմ եղել ու պաշտոնասեր եմ եղել: Բայց հենց այն պահից, որ պաշտոնաբաղձությունը իմ մեջ հաղթահարեցի, էդ օրվանից գործերս հաջող գնացին... Ես հիմի չեմ ձգտում պաշտոնի, չեմ ուզում, որ գնամ պրեզիդենտ կամ վարչապետի առաջ գլուխ խոնարհեմ, դա իմ ազատությանը վայել չի: «Վերնիսաժում» լավ ա, ընդեղ մի քիչ փող կա ու շատ ազատություն:

**- Զնարավոր է, չլինելով Հայաստանի գրողների միության անդամ՝ գնահատված գրող լինել, հայտնի է, որ քեզ չեն ընդունել ժամանակին, հիմի էլ չես ուզում:**

- Էն ժամանակ, որ ես ընդունվելու դիմում էի գրել, դիմումս իսկի քննարկման չէին դրել, հիմա առաջարկում են միության անդամ դառնալ՝ ես չեմ ուզում:

Գրականությունը հանրային պրոցես չէ: Գրականությունը ենթադրում է անհատականություն: Էդ գործը ես մենակ էլ գլուխ կբերեմ:

**- Բռավո, Լևոն, ուժեղ ես. քո գրքերը քո միջոցներով ես տպում:**

- Հա, ես տպել եմ, ու իմ շրջապատը առել ա, ես չեմ կարա խաբեմ, թե գրախանութներից թոցրել եմ, ըստե՞նց բան չկա, Հայաստանում զեղարվեստական գիրքը չեն թոցնում, մեկ-մեկ գալիս են կաֆեում նստում-պարծենում, թե 50 հատ ես մի գրախանութից եմ առել, 50 հատ՝ էն մյուս... էդ հեքիաթները թող գնան դրախտում պատմեն:

**- Ասա ինձ, Լևոն, մարդու որ տեսակն է այսօր ընդունելի՝ հարգված, նու՞րբ հոգով մարդիկ, թե՞ կոշտ:**

- Ես չգիտեմ թե իմ հոգին ո՞նց ա, նուրբ ա, թե կոշտ, եթե շատ նուրբ ըլնի՝ վատ ա, եթե կոշտ ըլնի՝ էդ էլ ա վատ, Հրանտ Մաթևոսյանը ասում ա՝ մարդ էնքան քաղցր չպիտի լինի, որ կուլ տան, ու ոչ էլ էնքան դառը, որ թքեն: Ես սկզբնական շրջանում կուլ եմ տվել շատ վիրավորանքներ, իսկ հիմի տուտ ժե ատվետը տալիս եմ:

**- Ծայրահեղությունը մանկականություն չի՞:**

- Գիտես ինչ, լավն էն ա, դու նույնը չես մնում. օրինակ՝ ես ինչու 30 տարեկանից սկսեցի գրել. պապս իշին նստած սարից իջնում էր՝ դարնիվեր, ես 12-13 տարեկան տղա, ճիպտը ձեռից վագեցի, որ ճիպտը անցկացնեն իշի երկու ոտների արանքը, է՛չը բորմիշ գա, պապս վեր ընգնի, ու ես ծիծաղեմ: Սոնա տատս ճիպտը ձեռին եկավ, որ քամակս դաղի, պապս չթողեց, ասավ երեխեն մեղավոր չի, մեղավորը մեր ուշահաս ցեղն ա, մեր ցեղում տղամարդը մինչը 30 տարեկան չի դառնում, նա տղամարդ չի: Ու ես պատահականություն չեմ համարում, որ ես իմ առաջին պատմվածքը գրել եմ 30 տարեկանում, ու քանի որ ուշահաս եմ, նոր եմ թափի մեջ մտնում, այնինչ շատ գրողներ իմ տարիքում արդեն իրենց գործն ավարտած են համարում, ես 57 տարեկան եմ ու զգում եմ, որ նոր շրջափուլ եմ մտնում...

**- Լևոն, եթե իշխանություն ունենայիր, քանի՞ մարդ կօժտերի Հայաստանում...**

- Կարծում ես՝ մարդ ծծե՞լով ե՞նք երկիր դառնալու... է՛չին ինչ-քան էլ ծծես, է՛չ ա մնալու:

**- Ինչպիսի՞ն է քո դիմակը, Լևոն Զավախյան, որովհետև հայտնի է, որ մարդիկ դիմակով են հանդես գալիս, որ**

**հեշտ լինի, փող ստանան...**

- Առաջին գիրքը որ գրել եմ, կոչվում ա «Ամենամանկեղծ մարդը», որտեղ այսպիսի մի տող կա. «Նա ամենամանկեղծ մարդն էր ու գրեթե ամենահիմարը»: Ես, օրինակ, զգացի, որ եթե մարդը գող ա, բող ա, հիմար ա, ավագակ ա, նրա երեսին կարող ա չեն ասում, բայց հո գիտեն. ես ուրեմն կյանքում որոշեցի, որ սենց թե նենց ամեն ինչ տեսանելի ա, էլ ինչի դիմակ կրեմ... Դիմացիմներս փակ խաղաթղթերով են խաղում, ես՝ բաց, ու չի ասվի՞ ե՞ս եմ լավ խաղում, թե՞ նրանք: Եղ «Չայն բազմացը», որ «Չայն Աստծո» է, ամեն ինչ էլ տեսնում է, էլ ինչի՞ իրար հետ խաղեր տանք, իրար ֆռռացնենք, առանց էն էլ ես Ղարաբաղյան շարժումը ենքան շահարկվեց ու վարկաբեկվեց, որ մեկը եթե ինձ մոտ ազգի անունից խոսում ա, սրտխառնոց եմ ունենում: Հոգնել եմ, շատ եմ հոգնել էդ ազնիվներից ու հայրենակիցներից:

- **Հա, դու Ղարաբաղյան շարժման մասնակիցներից ես, չէ՞, Լևոն:**

- Առաջին օրերից:

- **Իսկ հիմիկվա միտինգներին չե՞ս գնում:**

- Ես Նիկոլի «Լեռան քարոզներին» գնում եմ մեկ-մեկ, էն էլ իրան հարգելով, բայց որ ասեմ մեծ հավատ ունեմ էդ պայքարի

հաղթանակին-բան, չէ՞, ես ես տարիքում արդեն հեղափոխական չեմ, որովհետև հեղափոխությունները միշտ տվյալ սերնդին վարի են տվել: Ֆրանսիական հեղափոխության 100-ամյակին հարցրել եմ Զինաստանի կոմկուսի քարտուղարին՝ ինչ կարծիքի եք այդ մեծ հեղափոխության կապակցությամբ: Դեռ վաղ է այդ մասին կարծիք հայտնել,- պատասխանել է:

- **Լևոն, դու կուսակցության անդամ ե՞ս՝ որևէ:**

- Ես միայն դաշնակցության անդամ եմ եղել՝ մի ժամանակ: Դաշնակցությունը էն ժամանակ ընդդիմություն էր համարվում, ես էլ ընդդիմադիր հողավածներ էի գրում, ընկերներ ունեի, հատկապես Սեյրան Խաթիսյանն էր շատ շահագրգռված, որ ես դաշնակցական դառնայի: Հետո ես զգացի, որ գրողը չի կարող գոյատևել շրջանակներում, գրողը մերձ պիտի լինի կյանքին, ոչ թե կուսակցությանը: Կուսակցությունները ես համարում եմ մի շրջանակ, որտեղ թայֆաբազ մարդիկ ծվարում են՝ հույս ունենալով, որ մի թուլափայ էլ իրենց կհասնի: Ես դրանից հեռու եմ:


- **Լևոն, քո խոսքը ժողովրդին:**

- Ես ո՞վ եմ, որ ժողովրդին քարոզեմ, եթե ուզում եմ ինձ լսեն, բող գրքերս կարդան:

**Գայանե ԲԱԲՈՍՅԱՆ**

# Исторические анекдоты

## Если бесятся с жиру



## Магическая десятка

В последнее время появление цифровых систем для записи звуков, музыки или изображений привело к заметному сокращению объема аппаратуры и широкому внедрению мобильных средств связи. Однако не всем известно, что начало применения цифровых систем лежит в глубокой древности. Древнегреческий математик и философ Пифагор впервые обнаружил, что тон звучания струны зависит от длины этой стру-

ны, то есть он может быть выражен неким числом. Около 26 веков тому назад им была предложена цифровая космологическая система, выражающая построение нашего материального мира. В этой системе самым совершенным и магическим считалось число 10, так как оно содержит в себе все возможные составляющие реального трехмерного пространства. Как это обосновывалось? А так:  $10=1+2+3+4$  – это сумма первых четырех чисел. Причем 1 – это цифровое выражение точки, 2 – цифровое выражение прямой (между двумя точками может быть проведена единственная прямая), 3 – цифровое выражение плоскости (через три точки, в любом случае не лежащие на одной прямой, может быть проведена единственная плоская поверхность), 4 – цифровое выражение объемного тела (четыре точки могут быть расположены так, что соединяющие их прямые составляют плоскости, отделяющие некий объем в пространстве, например пирамида с треугольным основанием).

Видимо, совсем не случайно человечество в ходе развития цивилизации стало применять именно десятичную систему исчисления.

А случайно ли, что тело человека имеет именно десять каналов для сообщения с внешней средой?

В Древнем Риме к рогам бодливого быка привязывали охапку сена для предупреждения встречных об опасности. Выбор сена объяснялся тем, что в древности люди полагали, что животные, как и люди, бесятся от избытка еды. Недаром издревле бытует выражение: «С жиру бесятся». Между прочим, этот же прием с сеном применялся и в Армении с древнейших времен.

А в Древнем Риме это определение применяли также в отношении особо буйных и непредсказуемых политиков.

Например, римляне говорили, что у Марка Красса сено на рогах. Ведь даже самые скандальные политики, выступавшие с обвинением против других государственных мужей, избегали задевать Марка Красса, зная, как трудно и опасно иметь с ним дело. А потом в народе стали говорить, что красово сено перешло к Юлию Цезарю: он первый сумел в государственных делах противостоять Крассу и даже смотреть на него свысока.

В наше время количество людей, которые «с жиру бесятся», резко возросло. И неплохо было бы для безопасности населения прикреплять к бешено несущимся «Мерседесам» наших олигархов предостерегающий пучок сена.

**Роберт ОГАНЯН.**

# Чиновник и фантазия - несовместимые понятия!

Констатация: в суматохе рыночных перемен возник класс крупных собственников без трудового участия в создании этой собственности. Не осуждаю - так получилось. Но в остатке теперь - успешная вполне сложиться система отношений, в основе которой, в самом фундаменте, заложена колоссальная коррупционная составляющая. Ее много заложено, и она имеет свойство уве-

личиваться в размерах. С этим надо что-то делать. Бороться!

Но следует сразу сказать: борьба с коррупцией - это не массовый арест взяточников. Увы, она не удаляется хирургически, хотя соблазн показать конкретный результат очень высок. Вообще, месье не имеет ничего общего с юридическими нормами. Если уж на то пошло, то всех (почти всех!) граждан

РА избирательного возраста надо привлечь к уголовной ответственности. За что? За дело. Предвыборные взятки (в денежном виде, в натуральном виде, в виде заасфальтированных дворов и починенных крыш) брал? Брал. Ну так изволь - в места не столь отдаленные. Так, что ли? Конечно не так. Так борьба за законность трансфор-

33 Չ **Чиновник и фантазия - несовместимые понятия!**

мируется в борьбу с собственным народом. Борьба с коррупцией - это... только не смейтесь... борьба за гигиену отношений человек-власть, за чистоту то есть. Чистое исполнение чистых законов и, главное (здесь гвоздь проблемы!), подзаконных актов. Простой человек в быту много больше сталкивается со всякими мелкими постановлениями, чем с Законом.

Нет, конечно, можно бороться яростно - с треском и присутствием репортеров CNN, так, чтобы перья летели! Вот совсем недавно в Кутаиси всех (кроме одного) муниципальных чиновников арестовали в одночасье. Разумеется, с привлечением плечистых молодых людей в камуфляжной форме и (это непременно!) в черных масках. Бурные, продолжительные аплодисменты! Овация! Дальше что? Кто городом управлять будет? Вообще, почему только Кутаиси? Можно было всех до единого чиновников Грузии (да и Армении тоже) повязать - наверняка за каждым водятся разнокалиберные грешки. А в конкретном случае с Кутаиси прогнозирую результат этого карнавального действия: стоимость взяточоответной услуги там резко возрастет. В разы. Приятного аппетита!

Тогда что, если не силовые методы? Вместо телегеничных бойцов спецназа в черных масках лучше пусть работает экспертная группа в количестве... В большом количестве - допустим, сто анонимных специалистов в интеллигентских очках и, ладно, в черных нарукавниках. Но это не все - незачем их всех бросать на чистку одного закона. Путем простой жеребьевки выбирается пятерка, которая и подвергает экспертизе вышеупомянутый новый закон или постановление. Экспертиза на предмет коррупционной опасности. Законодательство, и прежде всего подзаконные акты - постановления правительства, приказы и инструкции ведомств, зачастую содержит нормы, дающие возможность чиновнику принимать решения по своему усмотрению (вилочные размеры штрафа, иного наказания, частота проверок, дача разрешения и др.). Именно возможность субъективного решения и является одной из причин живучести и распространенности коррупции.

И здесь - в результатах экспертизы - нужна максимальная гласность. Должны проговариваться вслух результаты проверки. Пусть все ознакомится с ними. И пусть это станет традицией: она много полезнее, чем массовые хороводы вокруг гор. Кстати, сколько было в процессе съедено? Не в прямом, а в переносном смысле. Вердикт экспертов необходимо исполнять - прощайте уже принятые или готовящиеся до-

кументы. Тут, естественно, последует возражение: экспертов купят. Да, попробуют. Но... Всякий раз? Всех (конкретную же пятерку выбирают жеребьевкой!)? Кто покупать будет? Покупателю для начала надо бы знать, что какое-то там постановление в недрах какого-то там министерства, или муниципалитета, или вообще ЖЭКа теперь станет чуть иным. И ему (взятодателю) не надо будет взятку давать, а ему (взяточбрателью) не с чего ее требовать... Согласен, все равно будут покупать экспертов. Но если все будет гласно, на виду у всех... Плюс альтернативная группа экспертов от оппозиции. Если она (оппозиция) потрудится работать наконец. Ежедневно.

Здесь что самое важное? Не оставлять чиновнику (лицу, принимающему решения с финансовыми последствиями) простора для творческой фантазии. Если мы не оставим чиновнику лазеек для его субъективного решения, это будет камешек для фундамента общества без коррупции. Либо «да», либо «нет» - потому что так прописано в законе. Да, чуть не забыл, можно все (!), что не запрещено (!). То, что запрещено, не можно в любом (!) случае. Естественно, без исключений. Между прочим, большая часть неправедных денег зарабатывается на исключениях. В наших условиях исключения подтверждают не первоначальное правило, а другое, почти биологическое: деньга деньгу любит.

Теперь - если кто-то чего-то там нарушил. Штраф. Размер штрафа? Стандартный - прописан в законе. А то у нас ведь как принято? Штраф от одной тысячи (1000) драмов до миллиона (1000000). В зависимости от ситуации. А ситуация почему-то складывается все та же: одна тысяча (1000) - штраф плюс полмиллиона (500000) взятки. Выгодно и тем (кто дает), и другим (кто берет). И невыгодно всем остальным, которых, надо отметить, абсолютное и подавляющее большинство.

И в заключение стоит привести пример антикоррупционной экспертизы официального документа - недавнее постановление правительства о лицензировании услуг такси-сервисов. Замечание напрашивается с ходу - пункт о том, что автомобили таких фирм должны быть не старше, чем десять лет. Стоп. Покажите мне на улицах Еревана легковушку 97-го и большего года рождения. Получится, конечно... Несколькo штук. И есть серьезные подозрения, что ни одного такси. То есть одним махом пера вычеркивается весь имеющийся таксопарк. Дальше что? Понятно: найдутся один-два-три олигарха, которые оптом закупят по несколько сот машин, и у нас будет не 800 (как утверждал один таксист) такси-сервисов, а всего три. «Ну и что? - спросят меня. - Лишь бы хорошо работали». А вот что. За новенькие машины будут нехилые денежки уплачены: траты надо компенсировать и иметь прибыль. Чем больше, тем, разумеется, лучше. Километр пути станет стоить не 100 драмов (как сейчас), а в лучшем случае 150. Но вряд ли. Скорее всего - 200 драмов. И «маршрутки» вздохнут спокойно - 150 др... Если кто-то не видит здесь явную коррупционную ухмылку, то это проблема его зрения, спрoвоцированная потребностями его же кармана. Я достаточно понятно выразился?

**Արա БАГԴԱՏԱՐՅԱՆ.**

## «Горцарар»

Издается с июля 1999г.

**АВТОР ПРОЕКТА-  
Ваграм БЕКЧЯН**

Зам. гл. редактора -

**Роза ГУЛЯН**

**Գլխ. խմբագրի տեղակալ՝  
Ռոզա ԴՈՒԼՅԱՆ**

**ИЗДАТЕЛЬ**

Издательский Дом

**«ШАГАНЭ»**

Лицензия серия ИД № 02313

Журнал зарегистрирован  
в Министерстве Российской Федерации  
по делам печати, телерадиовещания  
и средств массовых коммуникаций  
**Регистрационный номер**

**ПИ № 77-5015**

Авторские материалы  
не рецензируются и не возвращаются.  
Переписку с читателями редакция  
не ведет. Мнение авторов может  
не совпадать с мнением редакции.

**Материалы со знаком ♀ публикуются  
на правах рекламы.**

**Редакция не несет ответственности  
за содержание рекламных объявлений.**

**ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА - ЕЖЕМЕСЯЧНО**

Отпечатано

ОАО «Калужская типография стандартов»  
Формат А3, объём 4,0 п.л.  
Тираж 1 500 экз. Зак. № 2215.

**Территория распространения:**  
Российская Федерация, страны СНГ,  
зарубежные страны.

**В номере использованы материалы**  
«АЗГ», «АРАВОТ», «ГА», «ЕТЕР»,  
«ԿԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ», «ԻՐԱՎԱՆԿ»,  
«ՉԻ», «НОВОЕ ВРЕМЯ», «ВОЗНИ».

**Цена свободная.**

**Адрес редакции:**

**248001, г. Калуга,  
ул. Суворова, 160.**

**Тел.: (4842) 56-59-29, 59-17-73.**

**E-Mail: gortsarar@mail.ru**

**факс (4842) 565-929,**

**www.gortsarar.ru**



**E-Mail: bshahanev@kaluga.ru**